Ինչպէս յայտնի է Վրաստանի նախկին էքզարխ Ալէքսէյի կարգադրութեամբ Բաքուի նահանգի և Աղէքսանդրապոլի գաւառի համար հատատուել էր առանձին եպիսկոպոսական աթոռ, որի համար պէտք է ձեռնադրուէր Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի տեսուչ վարդապետ Նիկանդրը: Վերջինիս՝ մայիսի 31 ին սեմինարիայում և նրա առաջ պատահած դէպքերի պատճառով կանչեցին պետերբուրգ և ուրիշ տեղ փոխադրեցին: Այժմ լրագիրները հաղորդում են, որ մտադրութիւն կայ ոչնչացնելու Բաքուի և Աղէքսանդրապոլի պրաւօսլաւ եպիսկոպոսական աթոռը:

ՊՐԱԻՕՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ ՎՐԱՑ

Զուգդիդի եւ Սենակի գաւառների հոգեւորականների համաժողովը.

Յուլիսի 12-ին Մինգրէլիայի շրջանի գործակալներն ու հոգևորականութեան պատգամաւորները Իմերէթիայի Լէօնիդ եպիսկոպոսի թոյլտուութեամբ հաւաքուած էին Նովո-Սենակի քննելու ներկայ եկեղեցական կեանքի և Մինգրէլիայի հոգևոր և եկեղեցական դպրոցների վերաբերեալ խնդիրները: Համաժողովի նախագահ ընտրուեց միաձայն գործակալ Կ. Գուցերէլին: Համաժողովը վճռեց՝ Վրաստանի ուրիշ մասերի հետ միջնորդութիւն յարուցանել ռուսաց կառավարութեան առաջ, որ Վրաստանի եկեղեցու կառավարութեան ներկայ ձևը փոխի ուրիշ եկեղեցական—կանոնական կեանքին համապատասխան ձևով, ինչպէս որ կը վճռի հոգևորականութեան մեծամասնութիւնը և նրանց ընտրած և ընդունած կառավարութեան ձևը հրատարակել ի լուր և ի գործադրութիւն ամբողջ ժողովրդի: 2) Միջնորդել, որ Վրաստանում ներկայ հոգևոր դպրոցների փոխարէն բացուին ժամանակի ոգուն և մանկավարժական պահանջներին համապատասխան զուտ ազգային դպրոցներ: 3) Ազատել հոգևորականութիւնը ծխականներից նիւթականապէս կախուած լինելուց և ապահովել նրանց գանձարանից տրուող որոշ ռոճկով: 4) Թոյլատրել, որ ամբողջ կազմով, կամ ընտրուած պատգամաւորներով երբեմն երբեմն մասնակցելու վրաց եկեղեցու ամբողջ հոգևորականութեան շահերը պաշտպանելու այն համաժողովներում, որոնք կարող են տեղի ունենալ Թուֆայիսում, Թիֆլիսում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում և ազատօրէն ձայն տալու թեր և դէմ: 5) միջնորդութիւն

յարուցանել, որպէս զի թոյլ տրուի մի ընդհանուր եկեղեցական թերթ հրատարակել ամբողջ Վրաստանի համար վրացերէն լեզուով։

Այնուհետև ժողովն ի նկատի առաւ, որ եկեղեցական դպրոցներում ուսման և դաստիարակութեան ներկայ ձևը սպանում կամ խոչնդոտ է հանդիսանում մանուկների ինչպէս մտաւոր այնպէս էլ կրօնական-բարոյական և ֆիզիկական կրթութեան, և ի նկատի ունենալով, որ վիսխարքան արդէն պաշտօնապէս կարգադրել է սկզբնական դպրոցներում ուսումը մայրենի լեզուով կատարել, որոշեց.—խնդրել Գուրիայի և Իմերէթիայի թեմի կառավարիչ Լէոնիդ եպիսկոպոսից, որ վերջինս դիմի Փոխարքային և բացատրութիւն խնդրի, արդեօք այդ կարգադրութիւնը վերաբերում է և եկեղեցական դպրոցներին, թէ՞ ոչ։ Բացասական պատասխան ստանալու դէպքում փակել Մինգրէլիայի բոլոր դպրոցները՝ մինչև որ թոյլատրութիւն կըստացուի մայրենի լեզուով կատարելու ուսուցումը՝ թողնելով ռուսաց լեզուն որպէս առանձին պարտադիր առարկայ և խնդրել սրբազան Լէոնիդից, որ միջոցների ձեռնարկի այդպիսի դասաւանդութիւն մտցնելու դպրոցներում։ Այնուհետև որոշուեց փակել Մինգրէլիայի հոգևոր դպրոցը մինչև չը ձևափոխուի աղգային դպրոցի և չըգրուի մանկավարժական էական պահանջների համաձայն՝ կարճելով բոլոր պաշտօնեաների ռոճիկը։ Որովհետև ներկայ ժողովրդական խռովութիւնների ժամանակ հոգևորականների գանձարանից ստացուող ռոճիկն է նրանց տպրուստի միակ աղբիւրը, ուստի կարգադրութիւն խնդրել սրբազան Լէոնիդից, որ վերադարձուի հոգևորականների ռոճկից դպրոցի պահպանութեան համար վերցրած մասը և պահպանել ցնոր կարգադրութիւն եկեղեցական գանձարանից դպրոցի հիմնական դասարանների պահպանութեան և ուսուցիչներին վարձատրելու համար տրուող գումարը։

Բացի վերոյիշեալներից՝ ընդունուեցին նաև հետևեալ վճիռներ.—

1) 1906 թուից մտցնել դարձակալների ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ՝ երեք տարի ժամանակով։ 2) Իրաւունք տալ դպիրներին իրենց ներկայացուցիչներ ուղարկելու հոգևոր-դպրոցական և հոգևորականների համաժողովներին, միայն այնպէս, որ երեք քահանայ պատգամաւորների հետ պէտք է ընտրուի և ներկայանայ մի պատգամաւոր դպիրների կողմից։ 3) Ամբողջ հոգևորականութեան կողմից շնորհակալութիւն յայտնել Դուբնովոյին, ուսուցչապետ Մառին և «Ռազսվետ» և «Ռուս» թեր-

թերի խմբագրութիւններին այն յօդուածների համար, որ գետեղեցին ի պաշտպանութիւն Վրաց եկեղեցու, ժողովրդի և հոգևորականութեան շահերի: 4) Ներկայ թուից ամեն տեսակ յարաբերութիւն և գրագրութիւն կատարել անպայման վրացերէն լեզուով, իսկ գանցաուներին ենթարկել ընկերական դատի: 5) Բանադրել (անաթեմայի ենթարկել) բոլոր կաշառակերներին, կեղծաւորներին, մատնիչներին, և այն ընկեր հոգևորականներին, որոնք կրծածիկեն յանցաւորներին և չեն յանձնել ընկերական դատաստանի յիշեալ յանցանքներում նկատուածներին: 6) Աղատել եկեղեցիները «Духовный Вѣстникъ» ամսագիրը պարտաւորապէս ստանալուց և վերադարձնել հոգևորականներին ներկայ տարուայ երկրորդ կիսամեակի վճարը. նոյն ձևով չը-պարտաւորեցնել, որ եկեղեցիք անկարևոր գրքեր ստանան՝ ինչպէս այդ տեղի ունի ներկայումս և թոյլատրել, որ եկեղեցու միաբանութիւնը իւր բարեհայեցողութեամբ իրեն կարիքների համաձայն իշխանութեան հաւանութիւն գտած գրքեր բերել տայ: 7) Խորին ցաւակցութիւն յայտնել Վրաստանի թեմի հոգևորականութեան, որը մայիսի 31-ին զոհ դարձաւ կոպիտ բռնութեան և կամայականութեան, իսկ այդ բռնութեան և կամայականութեան հեղինակներին յայտնել զղջանք և դատապարտութիւն: 8) Որովհետև թեմական իշխանութիւնից գործակալներին յաճախ առաջարկութիւն է լինում զանազան ժողովարարութիւններ անելու, իսկ ներկայ անգործութեան, փողի սակաւութեան և ժողովրդական խռովութեանց պատճառով հնարաւորութիւն չկայ բան ստանալու, ուստի կարճել այդ ժողովարարութիւնները՝ մինչև ժողովրդի խաղաղուելը: 9) Որովհետև քաղուածքների բլանկների ներկայ 5 կոպ. վճարը հատին շատ մեծ է և այդ թերթերը 1 կոպէկից աւելի չ՝արժեն, ուստի որոշել վճարել մի միայն երկու կոպէկ, իսկ աւելորդ ստացած դրամները վերադարձնել:

Համաժողովը խորհրդածութեան առաւ նաև Մինգրելիայի Հոգևոր դպրոցի տեսուչ Նարբէկովի գործունէութիւնը, որից երևաց, որ պարոնը թէ ուսուցիչների և թէ ուսանողների հետ վարուել է կոպիտ և հակամանկավարժական կերպով, որը արտայայտւում է ի միջի այլոց աշակերտներին դպրոցից արտաքսելու, նրանց դասարաններ փոխադրելու առթիւ եղած կարգադրութեանց մէջ, ապա դասարանում աշակերտներին վախեցնելու նպատակաւ ատրճանակ կրելու, աշակերտների մէջ կեղծաւորութիւն, մատնչութիւն զարգացնելու, վրացի երեխաներին վրացերէն խօսելն արգելելու, իւր իրաւասութեանց սահման-

ներն հետզհետէ կամայականօրէն ընդարձակելու և ընդհանրապէս վրայ լեզուի և վրայի տարրի դէմ մղած հալածանքի մէջ։

Որոշուեց. Մինգրէլիայի հոգևոր դպրոցի տեսուչ Նարբէկովին յայտնել ամբողջ Մինգրէլիայի հոգևորականութեան կողմից գժգոհութիւն և խնդրել սրբազան Լէոնիդից, որ յիշեալ պարոնին անմիջապէս հեռացնելու համար միջոցների ձեռնարկուի՝ որպէս դպրոցին ամեն կողմից վնասակար մի անձ։ Ի նկատի ունենալով հոգևորականութեան ներկայ չքաւոր կացութիւնը, այն եկեղեցիների միաբաններին, որոնք 400 ռուբլուց պակաս ռոճիկ են ստանում, նպաստ տալ մոմի թեմական ձուլարանից և թեմական հոգևոր հոգաբարձութիւնից, եթէ այդ հնարաւոր կլինի։ 2) Ի նկատի առնելով ներկայ խռովութիւնները, որոնք տարածուել են պետութեան շատ տեղերում և սպառնում են հայրենիքին, եկեղեցու և հոգևորականութեան շատ և շատ շահերին, միանալով հայրենիքի բոլոր բարեկամների հետ, պահանջել, որ շուտով հրաւիրուի օրէնսդիր ժողով՝ ուղիղ, ընդհանուր, հաւասար և գաղտնի քուէարկութեամբ՝ որպէս լաւագոյն պայման պետութեան կուլտուրական զարգացման և վրդովուած ռուս ժողովրդին հանգստացնելու. որպէս արմատական միջոց՝ տալ ազատութիւն խօսքի, մամուլի, ժողովների և ընկերակցութեանց և ազատել եկեղեցու սպասաւորներին քաղաքական նպատակներին ծառայելու պարտաւորութիւնից»։

— Մեր խորին համակրութիւնն ենք յայտնում Մինգրէլիայի հոգևորականների համաժողովին, սիրով արձանագրում ենք նրանց քաղաքացիական գեղեցիկ և համարձակ ընթացքը և ճշմարիտ հայրենասիրութիւնը՝ բառիս լաւագոյն իմաստով և ցանկանում ենք օր առաջ իրագործած տեսնել նրանց որոշումներն ու գեղեցիկ վարիագը։

Սոխումի վրաց եպիսկոպոսական աթոռը և Քութայիսում փակուած հոգևոր սեմինարիան վերադրում են Նովօրոսիսկ։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Պիոս X պապի ընդհանրականը իտալական եպիսկոպոսներին «կաթոլիկական գործունէութեան մասին»։

Քաղաքական և հասարակական կեանքի նշանաւոր երևոյթ պէտք է համարել Պիոս X պապի ընդհանրականը իտալական